

Արձանագրություն թիվ 7

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ մայիսի 6-ին

Օրակարգում՝ 1. Քիմիայի ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը

Քիմիայի ֆակուլտետում գործում են 5 կրթական ծրագրեր

Քիմիա բաժին- 2 ծրագիր՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագիր

Սննդի անվտանգության բաժին- 2 ծրագիր՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագիր

Նյութագիտություն -1 ծրագիր – մագիստրոսական ծրագիր

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները որոշեցին բաց քվեարկությամբ հաստատել “Սննդի անվտանգություն” բաժնի բակալավրի և մագիստրոսական ծրագրերի ղեկավար Ա.Ի.Մարտիրյանին:

Բաց քվեարկության արդյունքներում (13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) “Սննդի անվտանգություն” բաժնի բակալավրի և մագիստրոսական ծրագրերի ղեկավար հաստատվեց ք.գ.թ.,դոցենտ Ա.Ի.Մարտիրյանը:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները որոշեցին բաց քվեարկությամբ հաստատել Նյութագիտություն - մագիստրոսական ծրագրի ղեկավար Ա.Ս.Գալստյանին:

Բաց քվեարկության արդյունքներում (13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) “Նյութագիտություն” մագիստրոսական ծրագրերի ղեկավար հաստատվեց ք.գ.թ.,դոցենտ Ա.Ս.Գալստյանը:

Քիմիա բաժնի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրի ղեկավարի պաշտոնի համար առաջարկվեցին երկու թեկնածու՝ ք.գ.դ.,պրոֆ.Ն.Ա.Դուրգարյանը և ք.գ.թ.,դոցենտ Լ.Ս.Գաբրիելյանը:

Բաց քվեարկությամբ խորհուրդը միաձայն որոշեց թեկնածուներ՝ Ն.Ա.Դուրգարյանի և ի Լ.Ս.Գաբրիելյանի անունները մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ – Ն.Գ.Խաչատրյան

Անդամներ- Ի.Լ.Ալեքսանյան, Հ.Հովհաննիսյան

Ընտրություններից հետո ֆակուլտետի խորհուրդը (16-անդամներից ներկա էին 13-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 13 անդամներ: Քիմիա բաժնի մագիստրոսի կրթական ծրագրի ղեկավարի պաշտոնին առաջադրվել են Ն.Ա.Դուրգարյանի և Լ.Ս.Գաբրիելյանի թեկնածությունները:

Ն.Ա.Դուրգարյանին - կողմ քվեարկել են խորհրդի-12 անդամ, դեմ- 1, անվավեր քվեաթերթ- չկա:

Լ.Ս.Գաբրիելյանին - կողմ քվեարկել են խորհրդի-1 անդամ, դեմ- 12, անվավեր քվեաթերթ- չկա:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Քիմիա բաժնի մագիստրոսական ծրագրի ղեկավար հաստատել քիմ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանին:

Քիմիա բաժնի բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի պաշտոնին առաջադրվել են Ն.Ա.Դուրգարյանի և Լ.Ս.Գաբրիելյանի թեկնածությունները:

Ն.Ա.Դուրգարյանին - կողմ քվեարկել են խորհրդի-6 անդամ, դեմ- 6, անվավեր քվեաթերթ- 1:

Լ.Ս.Գաբրիելյանին - կողմ քվեարկել են խորհրդի-6 անդամ, դեմ- 6, անվավեր քվեաթերթ- 1:

Առաջարկություն եղավ քիմիա բաժնի բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի պաշտոնին առաջադրել Լ.Ս.Գաբրիելյանի թեկնածությունը և դնել բաց քվեարկության:

Բաց քվեարկության արդյունքներում (13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) “քիմիա բաժնի” բակալավրի ծրագրի ղեկավար հաստատվեց ք.գ.թ.,դոցենտ Լ.Ս.Գաբրիելյանը :

Որոշեցին – բաց քվեարկությամբ (16 անդամից՝ կողմ 13, դեմ--0---, ձեռնպահ---0---)
հաստատել Քիմիայի ֆակուլտետում գործող հինգ կրթական ծրագրերի
ղեկավարներին :

Գիտխորհրդի նախագահ

Քիմիայի ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտխորհրդի քարտուղար

Ք.գ.թ.,դոցենտ

Մ.Ա.Սամվելյան